Ը ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՕԳՈՍՏՈՍ 1906 — ԹԻՒ 841

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 «

Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 «

Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռնէ 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ [illegible] խմբագրութեան անունին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

«ՅԱՌ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բըրօշիւրը յանձնված է տպագրութեան:

Բրօշիւրի նպատակն է, առանց խմբագրութեան Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց: Բնական է որ բրօշիւրի մէջ փաստող դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քաբաֆին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Ու հասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԱՆԶՕՐ ՃԻԳԵՐ

„Մուրճ“ի օգոստոսի համարում մի պօստ արկղ կայ (Նամակատուփ) որից հասկացվում է թէ դաշնակցական շէֆերին ձագկող „Մուրճ“ը բօյկօտի է ենթարկվել:

Բայց իրականութիւնը, շատ դառն, այն է որ այսօր կովկասեան բոլոր գոյնի հայ թերթերը խիստ քննադատութեան են ենթարկում դաշնակցական շէֆերին և նրանց սխալ ու բռնակալական գործունէութիւնը: Միթէ դաշնակցական բօյկօտը անզօր չէ այս պարագային. բօյկօտով միթէ կարելի է արդարութիւնը խեղդել. իհարկէ ոչ:

Երկու տարի առաջ էր որ „Շարժում“ը սկսեց բաց պայքարը այդ անարժան, անպէտք շէֆերի դէմ. ու Դաշնակցութեան մէջ բուն դրած ստոր տարրի ձեռք առած բոլոր միջոցները խորտակվեցին խմբագրութեան կամքի առջեւ: Այդ ժամանակ լաքէները ժողովրդին համոզում էին թէ ամբողջ Կովկասը իրենց հետ է: Այսօր կովկասեան ամբողջ մամուլը „Մուրճ“ով և «Մշակ“ով միասին որոնց վարիչները դաշնակցութեան համակիրներ էին, խիստ դատաւորներ են դարձել դաշնակցական շէֆերի համար: Եւ դրանց մեղադրանքները հիմնական կէտերում համապատասխանում են իմ քննադատականներին: Իսկ վաղը երբ բրօշիւրս արածվէ Կովկասում, իհարկէ այնտեղի մամուլը աւելի փաստեր կունենայ մէջ տեղ դնելու՝ իր նպատակից շեղված և այլասերված շէֆերով կառավարվող Դաշնակցութիւնը, ինչպէս բնորոշում է երբեմնի ալդեցիկ, աւելի ազդեցիկ քան ներկայ բոլոր շէֆերը, դաշնակցան Սարգսեանը—„Մուրճ“ի խմբագիրը. կարգի բերելու գործին ծառայելու համար:

Ու դաշնակցական արդի շէֆերը այս բաների առջեւը առնելու համար՝ բօյկօտի և քննադատներին մրոտելու անմիտ միջոցին են դիմում... անզօր և միանգամայն ապարդիւն ճիգ: Արդարութիւնը այդ միջոցներով չէ խեղդվում: Ամբողջ հայ մամուլը Կովկասում, արտասահմանում—յեղափոխական և ոչ յեղափոխական, անողոք դատաւորի է վերածվել մեր խեղճ շէֆերի վերաբերմամբ. և կամաց կամաց մօտենում են րօպէները երբ ամբողջ գաղափարական հայութիւնը իր բոլոր երանգներով, բօյկօտի պէտք է ենթարկէ դաշնակցութեան ներկայ շէֆերին որոնք դաշնակցութեան անհագին պրէստիժը, տաճկահայի ազատագրութեան համար հաւաքված ահագին գումարները գործ դրին Դաշնակցութիւնը կարելի եղածից աւելի բարոյական սնանկ դարձնելու:

Այո, Կարթագէնը պէտք է քանդվի—Դաշնակցութիւնը պէտք է արմատականապէս բարեփոխվի. այդպէս է պահանջում հայ ցեղի ամբողջ ազատական մտաւորականութիւնը: Ու դաշնակցական խումանապետները և խումանը, ինչպէս բնորոշում է նոյն Սարգսեանը, անկարող են չենթարկվել այդ պահանջին:

Բայց ի՞նչ երեսով Ամերիկայի „Հայրենիք“ի և Բուլգարիայի „Ռազմիկ“ի տաճկահայ վարիչները պէտք է նային իրենց եղբայրների երեսին, քանի որ այսպիսի պատմական րոպէներում, երբ տաճկահայի յոյսը կազմող կուսակցութիւնը փտախտաւորված կործանման է դիմում հայ ցեղի զայրոյթը դէպի ինքը գրաւելով՝ այդ պարոնները հիւանդի տէրերին չահագործող փիս բըժիշկների նման մտհացու ախտը թագցնելով ու խաբելով կրկնում են՝ բան մը չըկայ՝ Վարդօի և ուրիշներուն գրածները բոլորը սուտ, զրպարտութիւն և յերիւրանք են ու մեր կուսակցութիւնը վէրք մը չունի. ատանկ ուտերին դէմ պատասխանել չարժէ:......

Այսօր „Մուրճ“, “Մշակ“, „Նայծ“, „Աշխատանք“ գագրած „Արշալոյս“ը „Կեանք“ գրեթէ նոյնն են կրկնում. ինչ որ մենք էինք ասում այս էջերում...

Այո խեղճ մարդիկ. արդար, իրաւացի պայքարը երբեք չի մեռնի մրոտումի ազդեցութեան տակ: Նա կը յաղթանակէ միշտ և աւելի շուտ քանի որ պայքարի նիւթը ձեզ նմաններն են կազմում:

Այսօր ամբողջ հայ մամուլը դատափետում և քննադատում է ձեզ և գոհ, շատ գոհ եմ որ առաջին խօսքը հարուածը ես եղայ ձեր գլխին... հասցնողը ու աւելի խոշորները դեռ գալու են.... ստեղծելու համար ամեն բան սրբող տանող յորձանքը որի մօտ ոչինչ են պղտոր „Ալիք“ները իրենց Զանգային ճղճիմ հնչիւններով:

ՎԱՐԴՕ

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅ ՍԱԶԴԵՑՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԷՋ

Նորից նոր և յաջորդաբար սեւ գոյժերի եւ բօթերի լուրեր են գալիս Պարսկաստանից Կովկասից և վաղն էլ ո՞վ իմանայ, ո՞ր կողմից պէտք է գայ եղբայրասպանութեան ցնցող, կատաղեցնող ոճիրների լրացուցիչ մասը, որ բոլորովին սպառէ հայի համբերութիւնը, շէզոքների անտարբերութիւնը, եւ անտարբերների սառնասրտութիւնը, և, տեղի տայ երկու հայ բանակների ներքին պատերազմին, զէրար կոտորելուն ի սպաս հայութեան կրկնակ թշնամիների, ու վերջապէս երբեմնի այնչա՛փ պաշտելի եղած Յեղափոխութիւն անունը՝ իսպառ ատելի և արհամարհելի մի անուն դարձնէ հայութեան ականջին, մտքին և սրտին...

Մտածել մի անգամ, թէ՛ այսուայ կովկասեան ազգայնական կեանքը իր տաժանելի վիճակում՝ հազիւ մի քիչ մխիթարական երեւոյթ է ստանում ամենաթանգ կեանքերի ու ջանքերի զոհաբերութեամբ հազիւ օտարների աչքում հայն էլ նշանակութիւն է ստանում իբրեւ իրա պատւին և ազատութեան համար պատերազմելու կարող մի տարր, վրայ է հասնում յանկարծ ցած և ստոր կրքից դրդւած եղբայրասպանութիւնը և՝ վարկաբեկ անում ամբողջ ազգի պատիւը: Միթէ մեր ոխերիմ թշնամիներն էլ այս չե՞ն ցանկանում... Ուրեմն ի՞նչ են անում մեր անհասկացող գործիչները, իրա՞նց նպատակին են ծառայում, թէ՞ թշնամուն. չենք իմանում: Մետաղը բովից դուրս կը գայ, կամ զտւած կամ ցնդած. այդպէս էլ ազգեր իրանց վտանգաւոր շրջանից դուրս կը գան՝ կամ խրատւած և փորձւած եւ կամ ապշած ու յիմարացած: Մենք մեր փորձութիւնից դուրս եկանք բոլորովին յիմարացած ապացոյց են մեր գործերը. որոնցից ի բաց թողնելով մեր

յեղափոխական բոլոր գործերի անյաջողութիւնը. Իբր մեղմացուցիչ պարագայ ազգասիրական տկար զգացումի վառացանք մինչեւ մեր ազնիւ եղբայրներին սպաննելու աստիճան. մեր հարազատ, համբերող եւ մեր սրբազան հոչակած նպատակին համար մեզ հետ աշխատակցող եղբայրներին։ Սպաննուեցան Ժամհարեաններ, Ունճեաններ եւն. դրամի համար, իսկ հայ զինուորներ էլ սպաննուեցան հայի ձեռքով. սրանք ինչո՞ւ համար; Ո՞վ պիտի պատասխանէ այս հարցումին և կարողանայ արդարանալ. Կարծում եմ պատմութիւնն իսկ պիտի պապանձի այս սեւ էջերի արձանագրութեան միջոցին։ Այո՛, ինձ հետ եւ շատեր կարող են ըմբռնել գաղափարի տարակարծիքութիւն, համազգայինի իրա նմանին պատահական սպանութիւնը. բայց մեր կեանքի երկար տարիներում ո՛չ մի տեղ, ո՛չ մի անգամ չտեսանք ո՛չ մի ազգի մէջ այսչափ եղբայրասպանութիւն, որպիսին տեսնում ենք այսօր մեր գործիչների մէջ։ Ուրեմն, սա մի պատահական երեւոյթ չէ ա՛լ, սա մի չափւած, ծրագրւած եւ որոշւած կանոնական գործառնութիւն է մի յիմար, կործանիչ, ազգասպան եւ վա՛տ գործառնութիւն, որի հանդէպ չեմ հաւատում թէ այսուհետեւ անտարբեր գտնուի հայութիւնը, որի չարագործները՝ թշնամիներու հետ միացած, ճզմոտոր են անում եւ հայ խմբակներ, միմիայն ադէտօրէն զոհ լինելով յիմար չէֆերի։

Ով եւ իցէ ազգի մի ազնիւ անհատ, պէտք է միեւնոյն ազգի պատկանող մի ուրիշ անհատը նկատէ իբրեւ իրա անձը. այսպէս է սահմանում ազգասիրութիւնը, այսպէս է պատւիրում եւ քրիստոնէութիւնը. բայց առաւել ազգուապէս այս է պահանջում եւ Յեղափոխութիւնը. եւ այս սկզբունքի համաձայն՝ երբ մի մարդ իրա եղբօրն է սպանում, դա եղբայրասպանութեան հետ գործում է եւ ինքնասպանութիւն. եւ այդ իսկ ճըշմարիտ պատճառաւ մենք եղբայրասպանին ճանաչում ենք ինքնասպան, հետեւաբար եւ Ազգասպան։ Աւելորդ բացատրութեան կարիք չկայ։

Բարոյական գիտութիւնը ինքնասպանին հոչակում է վա՛տ, իսկ քրիստոնէութիւնը անձնասպանին զլանում է իրա ծիսական մի երկու աղօթքն, եւ համայն մարդկութիւնը հասարակաց գերեզմանատունն էլ չէ ընդունում ինքնասպանին դիակը։

Եւ դժբաղդաբար այսօր հայութիւնը մի քանի խելառ եւ խելագար գործիչների յիմարանքից տուժում է ազգայնապէս, տուժում է անհատապէս, տուժում է բարոյապէս, կրօնապէս, նիւթապէս, քաղաքականապէս եւ այլ ամեն տեսակէտով՝ ու հիւծւում, սպառւում է հայրենի եւ օտար երկրում եւ ամեն տեղ։ Ազգը արիւնաքամ կենդանի է լինում օտարից. եւ ինքնասպան է լինում ինքն իրանից. Ճիշդ այն ձեռքերով՝ որոնք կոչւած էին հայութեան վիրաւոր սրտին բալասան եւ սպեղանի դնել, բայց հակառակն են անում։ Էլ բաւակա՞ն է պարոններ. բաւակա՛ն . . . ։

Եթէ մի Ներոն սպաննում էր Խարդկանց. իրա զուղանային կրքերին յագուրդ տալու համար գուցէ սպաննում էր. եթէ մի Լանկթիմուր մի Ճինկիզ խան սպաննում էին, իրանց աշխարհակալական կամ վայրենի բնազդներին էին հետեւում. եթէ մի Մերուժան, մի Վասակ սպաննում, դաւում ու դաւաճանում էին հայերին, թագի, գահի եւ փառքի համար լին սպաննում դաւաճանում եւ վատանում. իսկ եթէ մի Համիդ կոտորեց հայերին, իրա տիրական, իշխանական իրաւունքն էր պատճառաբանում իսկ դո՛ւք, հայե՛ր, հայ եղբայրներ ի՞նչ անւան կամ կուսակցութեան էլ պատկանած լինիք, խնդրում եմ ասացէ՛ք, ԴՈՒՔ ԻՆՉՈ՞Ւ ԷՔ ՍՊԱՆՆՈՒՄ։ Դուք ինչո՞ւ էք սպաննում ձեր համազգի, համբերող եղբայրներին, մի անգամ սթափւեցէք, խորհեցէք մտովի, առանձին եւ՝ եթէ գտնէք ձեզանում մի արդարացուցիչ փաստ ձեր եղբայրներին մորթոտելու, մեզ էլ յայտնեցէք. ինչպէս Վասակը, որ իրա սխրագործութեան միջոցին մենախօսում էր ասելով.— Արաբը սպաննո՛ւմ է հային, Յոյնը սպաննում է հայի՛ն. Պարսիկը սպաննում է հայի՛ն. Ասորին սպաննում է հայի՛ն. Հա՛յն էլ է սպաննում հայի՛ն ... —ու գործադրում իրա սեւ խորհուրդը։ Էլ խօսք ու միտք. գրիչ ու թանաք կանգ առած, տեղի են տալի ողբի եւ կատաղութեան... բաւական է; Անդրանիկ ու Մուրատ՝ օրւայ առիւծներ, թող շրջահայեաց եւ հեռատես լինին. վար գցել տան եղբայրասպան, ինքնասպան սուրը հայ ձեռքերից. եւ այդ ձեռները միացնեն իրար եղբայրաբար. ու այնպէս գործեն, քանի դեռ ուշ չէ...

ՊԱՊԻԿ

ՎԵՑ ԱՄԻՍ ՊԱՐԻԶՈՒՄ

(Տպաւորութիւններ)

(Շար. 834 թիւէն)

Փոքրիկ Մուզէների մասին համառօտ տեղեկութիւններ տւինք. մեծ մուզէներն են, ինչպէս սկզբներում յայտնեցի Լուվր, Ինվալիտներնի պալատը Տրոկադերօ եւ Լիւքսէմբուրգ։ Այս չորս մուզէների մէջ տեղաւորւած են աշխարհիս չորս կողմերում հին եւ նոր արւեստի եւ գեղարւեստի հրաշալի մնացորդները որոնք յստակօրէն պարզում են մարդկային բոլոր ցեղերի աստիճանական զարգացումը արւեստագիտական եւ գեղարւեստական ամեն ճիւղերը շօշափելով։ Նկարագրել այդ ամենը ես անկարող եմ, որովհետեւ նախ հարկաւոր էր այդ ամենը կանոնաւոր ուսումնասիրել, որի համար տարիներ պէտք են. երկրորդ «Շարժում»ի առհասարակ լրագրենելի էջերը շատ նեղ են այդ տեսակ մուզէների պարունակութեան նկարագրութեան համար։

Մուզէներից յետոյ ամենաուշագրաւ հիմնարկութիւններից մին է Պարիզի Հալլը, այսինքն Պարիզում սպառւող ուտեստի շտեմարան խանութները։ Անշուշտ կան կարդացողներ Զօլայի Լը վանտր դը Պարի վէպը (Պարիզի փորը) Այդ հսկայական փորը այսինքն ուր հաւաքւած են հում մթերքները—բուսեղէն մսեղէն, ձկնեղէն պտուղներ, ծաղիկներ անթիւ-անհամար քանակութեամբ գաղափար է տալիս Պարիզի ժողովրդի օրական սպառած պաշարի քանակութեան մասին. գրեթէ աշխարհիս բոլոր մսեղէն, ձկնեղէն եւ բուսեղէն ուտեստի նմուշները կան այդ հսկայական շտեմարան՝ խանութներում։ Լուսադէմին Պարիզի չորս կողմերից հսկայական բեռնակառքերը դիմում են դէպի Հալլ. եւ գաղափար կազմելու համար պէտք է չորսին հինգին արդէն լինել Հալլի մօտերը դիտելու համար այնտեղի աշխատութիւնը; Միսը, ձուկը, բանջարեղէնները չոր եւ թաց պտուղները եւ այլ ուտելիքներ իրենց առանձին բաժինները ունին եւ այնքան հրաշալի կերպով են դասաւորւած, որ մարդ ուզած չուզած հրապուրւում է. Անթիւ անհամար օրերոգներ, կիներ այր մարդիկ ծեր, երիտասարդ պատանի աշխատում են Հալլում առաւօտեան ժամի չորսից սկսած մինչեւ 11—12. Այնուհետեւ կեանքը դադարում է, մեծամասամբ բոլորն էլ առողջ գեր, կարմրաթշիկ, ուժեղ մարդիկ. սոսկալի տպաւորութիւն են թողնում մսագործները իրենց հսկայական հաստակներով սպիտակ շապիկ գոգնոցներում արիւնի մէջ թաթխւած։ Այդ միլիոնաւոր քիլոգրամ ուտեստ պարունակող հիմնարկութեան պատերի տակ քնոտել կամ առանց քունի պառկոտել են Պարիզի սոված քաղցածները Կոնտրաստը սարսափելի է. աչքի առաջ դատարկւում դասաւորւում են հրաշալի միս ձուկեր, պտուղներ, բանջարեղէններ, հացեր—ու օրերով քաղցած, մնացած, անօթի մարդը այդ ամենը տեսնում է եւ չէ կարող մի պատառ վերցնել եւ իր քաղցը յագեցնել... Պարիզում քաղցած մնալը անտանելի է, իսկ քաղցած մնալը

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Անցեալ անգամ մենք «Մուրճ»ից արտատպեցինք պ. Լեւոն Սարգսեանցի մի յօդւածը Դաշնակցութեան և նրա չէֆերի մասին. այսօր էլ նոյն պարոնի գրութիւններից արտատպում ենք արտասահմանի հայ ժողովրդին պարզելու համար որ Կովկասի ամբողջ հայ մամուլը խիստ քննադատութեան է ենթարկում ներկայ Դաշնակցութիւնը իր այլասերված չէֆերով միասին։ Ինչպէս կոչում է Լեւոն Սարգսեանց. Լեւոն Սարգսեանց Կովկասի ամենածանօթ հանրային գործիչներից մէկն է՝ թէ իբր հրապարակագիր, թէ իբր դպրոցական գործիչ և թէ իբր Տաճկահայ դատի սկզբնական պաշտպան և գործիչ. Լեւոն Սարգսեանցի «Մուրճում» աշխատել են և գրել Դաշնակցութեան ներկայ [բոլոր գրագէտ հրապարակագիրները և այդ ամսագրում մարզվել։ Զարմանում ենք որ «Հայրենիք»ը Ամերիկայում և «Ռազմիկ»ը Բուլգարիայում երբեք չեն արտատպում «Մուրճ»ի, «Մշակ»ի, և կովկասեան միւս թերթերի քննադատականները Դաշնակցութեան մասին. Մինչդեռ կովկասեան մի չնչին դէպք իսկ արձագանք է գտնում այդ վարձկան թերթերում։ Ինչպէս երեւում է դրանք չեն ուզում անմեղ նուիրատուներին՝ պարզել որ այսօր «Մշակ», «Մուրճ», Աշխատանք» «Կեանք», «Այգ» թերթերը և որոնք ամէնքն էլ ազատական] և յեղափոխական թերթեր են, ամենախիստ քննադատութեան են ենթարկում Դաշնակցութիւնը և հաստատում «Շարժում»ի դատափետումները.

Այդպիսով «Հայրենիք»ի և «Ռազմիկ»ի խմբագրութիւնները փաստում են թէ վարձկան հրապարակագիրները՝ ժողովրդի իրական շահերով չեն հետաքրքրվում, այլ միայն իրենց վարձքով։

«Ալիքի» Մանեովրները(*)

«Ալիքի» ղեկավարները, իբրեւ արդի դաշնակցական բիւրոկրատիայի մտաւոր բարոյական կարողութեան ներկայացուցիչներ, բաւական ճիշտ գաղափար են տալիս այն տրագիքական դրութեան մասին, որի մէջ գտնվում է հազար ու մի նպատակ ըղձող եւ ոչ մէկին հասնելու ճանապարհ չիմացող «Դաշնակցութիւն» կոչւած ընկերակցութիւնը։ Ցայսօր այդ ընկերակցութեան օրգաններում չկարդացինք մի նոր խօսք, մի ինքնուրոյն գաղափար, մի հաստատ աշխարհայեացքը, մի հարցի լուրջ քննութիւն։ Միայն այն է աչքի ընկնում որ մարդիկ, օրիգինալ երեւալու համար, արւեստական միջոցներով բղբղում են, բորբոքում իրանց «վէրքերը» եւ գրգուած, սարսափելի ըմբոստ ու ցասկոտ ժեստեր անում, ջղեր քայքայող կառաչներ արձակում։ Այլապէս ի՞նչ անեն «Ալիքի» ղեկավարները, երբ «Դաշնակցութիւն» կոչւած ընկերակցութիւնը մի նոր Նոյեան Տապան է ներկայացնում իր խառնիճաղանճ կազմով. Ինքներդ դատէք. դաշնակցական զինւորները», հաւատարիմ հին ուխտին, դէպի Տաճկաստան են ձգտում. միւս կողմից նոր հովերով բռնւած դաշնակցական «սօցիալիստները» ուզում են ամբողջապէս նւիրվել դասակարգային կռիւներին, պրօֆեսիոնալ կուսակցական միութիւններ բազմացնել. երրորդ կողմից՝ դաշնակցական փորձւած բիւրոկրատները չափազանց սիրել են իշխել եւ կուզէին այժմ բազմել վեհարանի, առաջնորդարաններ եւ հոգաբարձական խորհրդարանների փափուկ բազկաթոռներում եւ ազգային-եկեղեցական խնդիրներ կարգադրել, ազգօգուտ հրահանգներ մշակել եւ... ֆավորիտիզմ բանեցնել իրանց թայֆային պատկանողների նկատմամբ, ինչպէս այդ վայել է ապարտամենտների եւ դեպարտամենտների կոնֆորտը սիրող իսկական բիւրոկրատներին։

Սակայն դրանց դժբախտութիւնից հայկական հորիզոնի վրայ երեւացել

(*) Ծ. Խ. Այս կտորը քաղում ենք «Ալիք»ի դէմ ուղղված յօդւածից

Հալլի կողքում դժոխային տանջանքից էլ անչուշտ անտանելի է... Եւ ահա թէ Եւրոպան ինչու է ծնում անարշիստներ.—Մարդը օրերով անօթի է—քնատ, սանթիմ չունի գոնէ մի բաղկ առնելու իսկ այնտեղ Պարիզի բուրժուան տասնեակ ֆրանկներ է տալիս մի կտոր մսի, մի քիլօ ձուկի, մի բուռն պտուղի, մի փունջ ծաղկի համար —Անօթի քաղաքացու եւ կուշտի տարբերութիւնը զգալու եւ այդ տարբերութեան պատճառով ստեղծուած ատելութեան մեղմացումը եւ արդարացումը փաստելու համար պէտք է գիտել Պարիզի «Հալլը» (Պարիզի փորը) եւ նրա պատերի տակ թափառող անօթիներին ։

Աւելի ճիշտ գաղափար կազմելու համար թէ այդ „Հալլում» ուչափ ուտեստի պաշար է վաճառւում օրական.—պէտք է գիտենալ որ Պարիզը երեք միլիօն բնակիչ ունի. ուրեմն Յունաստանի չափ բնակչութիւն եւ ուրովհետեւ Պարիզեցի ամենահասարակ բանւորը աւելի լաւ է կերակրվում քան Յունաստանի բնակչութեան 8 ը տասերորդը, ուստի կարելի է ընդունել որ «Հալլում» օրական Պարիզի համար երկու անգամ աւելի շատ ուտելեղէն է ծախսվում քան ամբողջ Յունաստանը։

ՎԱՐ՝Օ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ազգային երեսփոխանական ժողովը որ վերջին անգամ գումարուած էր 1896ին, եւ Օրմանեան սրբազան պատրիարք ընտրած էր, ահա անգամ մը եւս կը գումարի օգոստոս 1ին ։ Տասը տարուան մէջ 140 երեսփոխանաց թիւը 56ի իջած է, որոնց մէ 51ը պատրիարգարանին սրահը կը գումարուի ։ Ներկայ հանգամանքները նկատողութեան առնելով, ալ 71 թիւի մեծամասնութիւնը փնտռող եղած չէ ։ Երեսփոխան Տիգրան էֆէ. Բարղամեան, իբր երիցագոյն անգամ՝ Ատենապետի, իսկ Մկրտիչ էֆ. Մելիքեան Ատենադպրի պաշտօնը վարեց ։ Այս գումարումը մասնաւոր նպատակի համար է. վերանորոգել կրօնական եւ քաղաքական ժողովները, որոնք տաս տարուան մէջ բաւական անգամ կորուսած էին ։ Քըւէարկութիւնը հետեւեալ արդիւնք տուաւ . . . . . .

Ուշագրաւ իրողութիւն մըն է որ Եուսուֆեան Տիգրան, Խըտըրեան Գրիգոր էֆ.ները եւ պատրիարքին քեռայր Տ. Ներսէսեան Տիգրան էֆ. չընտրուեցան ։

Իսկ տխրահռչակ Յոպէռ Նազըճեան միայն ու միմիայն մէկ քուէ առաւ, հակառակ գերմարդկային ջանքերուն եւ կառավարական ազդեցութեան ։

Կրօնական ժողովին մէջ մուտք չէ կրցած գտնել Երէցեան Գէորգ եպիսկոպոս ։ Իսկ Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ Զիլինկիրեան վարդապետ, որ պարկեշտութեան մէջ համբաւ կը վայելէ, ու Վանքեան Արիստակէս եպիսկոպոս, և Դիմաքսեան Հմայեակ եպիսկոպոս չընտրուեցան, վանքի բարձրագոյն արգելք դրուած է իրենց դէմ ։

Վարչական նոր ընտրութիւնը լըրագիրներու միջոցաւ հրատարակուելու արտօնութիւն չը տրուեցաւ ։

Ընտրութեան արդիւնքը անմիջապէս տեղեկագրուեցաւ դատական նախարարութեան պաշտօնատունը, ու ապահովաբար նախարարաց ժողովը իր վաւերացումը պիտի տայ ։

—Պատրիաքի հրաժարման առիթ տուող խնդիրները կարգադրուած են հետեւեալ կերպով ։

Ամէն մէկ նահանգի մէջ յանձնաժողով մը պիտի կազմուի երեք հոգիէ բաղկացեալ, որոնց մէկը տեղացի փոխս մը, երկրորդ քաղաքապետութեան անդամ մը, ու երրորդը՝ կառավարութեան ներկայացուցիչ մը ։ Անոնք միշտ պիտի գումարուին եւ անոնց որոշմամբը, անգամ ընտրութեանց պիտի արուի, վաճառականներու միայն ։

Վանքապատկան հողային սեփականութեանց խնդիրն ալ նմանապէս նահանգային յանձնաժողովներու քըննութեան յանձնուեր է, ընդ նախագահութեամբ նահանգին կուսակալին կամ կառավարչին, որոնք իրենց տեղեկագիրները Բըլտըզի պալատը պիտի ղրկեն հոն կազմուած քննիչ յանձնաժողովի մը ։

Իսկ բռնաբարող «Մուհաճիրները» ազգային սեփական հողերուն վրայէն անմիջապէս դուրս հանելու հըրաման տրուեր է ։

—Իշխան Գուիտոն Լուսինեան, հանրային գործունէութեան մէջ կըսկսի փայլիլ աւելի քան կէս դար առաջ երբ, իբրեւ Ամբրոսիոս վարդապետ Գալֆայեան. Մխիթարեան միաբանութենէն. հրաժարուելով՝ հայ եկեղեցւոյն անդամակցեցաւ, ուրիշ երեք վարդապետներու հետ մէկ տեղ —որք են, իր եղբայրը Խորէն վարդապետ (յետոյ Նարպէյ սրբազան), Սաւգիս վարդապետ Թէոդորեան և Գաբրիէլ վարդապետ Այվազեան ։

Փարիզի մէջ նախ Մուրատեան վարժարանին, եւ Մխիթարեաններէ բաժնուելէ ետքը՝ Հայկազեան վարժարանին ուսուցչապետ լինել յետոյ՝ Ամբրոսիոս վարդապետ բոլորովին նուիրուեցաւ գրական աշխատութեանց ։ Իր թարգմանութեանց եւ հեղինակութեանց մէջ նշանաւոր են "Տելեմաք»ը ։ «Պօլ եւ Վերգինէ»ն, Հայ-ֆրանսական բառարանը, Հին եւ նոր ազգաց պատմութիւնը, եւ ամենէն վերջ Ֆրանսահայ երկհատոր բառգիրքը ։

Ամբրոսիոս վարդապետ Գալֆայեանի կեանքը նոր փուլի մը մէջ կը մտնէ այն թուականին երբ իր եղբօրը, լուսահոգի Խորէն սրբազանին հետ կը ճանչցուի իբրեւ եղբօրորդի Բեզըրպաւըրկ բնակող Լուսինեան իշխանի մը, որով երկու Գալֆայեան եղբայրները կը ներկայանան իբրեւ Լուսինեան արքայական առհմի շառաւիղներ 1878 ։

Ամբրոսիոս վարդապետ, իբրեւ 1860ին հոգեւորականութենէ հրաժարելով կամուսնանայ հարուստ եւ ազանդաւոր ֆրանսուհիի մը հետ, որ վախճանեցաւ անկէ քանի մը տարի առաջ ։ Ժամանակին մեծ գովեստներ գրուեցան իշխանուհի Մառի Լուսինեանի նուագահանդէսին նըկատմամբ, ի նպաստ Հնդաստանի սովելոց (1880 ։)

Իշխան Լուսինեան նշանաւոր է նաեւ իր բարեգործութիւններով ։ Կարելի է ըսել թէ իրեն ուղղուած ոչ մէկ դիմում անյաջող կը մնար ։ Հայ ուսանողներու եւ կարօտեալներու, հրատարակութիւններու, ընկերութիւններու եւ նման հաստատութիւններու՝ բաժին կը հանէր այն հասոյթէն, զոր կինը բերած էր իրեն եւ որ ընդհանրապէս կարծուածին չափ առատ բան մը չէր ։

Հանգուցեալը ժամանակ մը լըջօրէն կը մտածէ եղեր դատավարութեամբ անգլիական կառավարութենէն ստանալ Լուսինեան ցեղին Կիպրոսի մէջ ունեցած կալուածները, բայց այդպիսի ձեռնարկի մը համար պահանջուած ահագին գումարներու պէտքին առջեւ տեղի տուած էր ։

Իշխան Լուսինեան իր կատարած բարիքներովը եւ արտադրած գրական գործերովը կը թողու յիշատակ մը, որ աւելի տեւական ու փառաւոր է քան իշխանական տիտղոսը, որուն պատմական վաւերականութիւնը ճանչցնել տալու ալ ոչ նուազ մտահոգ գտնուած էր ։

Իր միակ զաւակը ։ Լեւոն պէյ Լուսինեան, երբեմն օսմանեան արքունեաց մէջ պաշտօնեայ, Խորէն Նարպէյ սրբազանի չնորհազրկումէն ի վեր Փարիզ կը բնակի, հայութեան համար օտար մնացած ։

«Լուսաբեր»

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ
ՍԻ ԲԱՆՍԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Դեռ հինգշաբթի օրւանից Հ. Յ. Դաշնակցութեան Ռուսճուգի կօմիտէի հանած հրաւիրագիրը յայտարարեց թէ պ. Նօհրատեանը ամսի 27 ին պիտի բանախօսէր ...

էն աւելի ծայրայեղ ջահիլներ՝ «Կեանք», «Կայծ» եւ «Աշխատանք», որոնք չափազանց անհրեւ են ու չարաճճի եւ իրանց մշտական յարձակումներով եւ անողորմ մերկացումներով խանգարում են, որ դաշնակցական բիւրօկրատիայի անսխալականութիւնն ու գօրիշխանութիւնը ամրանայ հայ ժողովրդի մէջ ։

Լեւոն Սարգսեան

10 յուլ. 1906 թ. («Մշակ» No. 150)

—

(*) Ոխը, քէնը սկսում էր շատ վաղուց, այն օրից, երբ Բագուի ջարդերը տեղի ունեցան ։ Երբ ամէն օր ծագում էր վէճ իմ եւ նրա մէջ Դաշնակցութեան սխալների մասին. այդ փոքրիկ ֆանտաստը միշտ դուրս էր գալիս իր սովորական "մեղմութիւնից» ։ Եւ Բագուի ջարդերի առիթով իմ եւ նրա մէջ կայծքների ներհակութիւնը ստեղծեց առաջին խոշոր ընդհարումը, որ կոկեց մի կերպ ։ Հոկտեմբերի 17ից յետոյ լոյս տեսաւ "Մուրճը» բորբոքեց մինչեւ ոսկորներին ծուծը չովինիստ գրողին եւ նա հրապարակ դուրս եկաւ «Մշակում» իր ցասկոտ նամակով ։

Եթէ յիշում է ընթերցողը, պատասխանիս մէջ այն ժամանակ յիշեցի որ շարունակել նրա հետ բանակռւելը ես յարմար չեմ գտնում քանի որ պէտք է խօսեմ Դաշնակցութեան ազգիեսիւ տակտիկայի մասին, իսկ այդ այն հանգամանքներում անկարելի էի համարում ։ Բայց ահա այս տարւայ ապրիլ ամսից ըսկսվում են "Մուրճում» մի շարք յօդուածներ Անկախի, որոնք սիստեմատիկ ումբակոծումներով նախապատրաստում են անկումը ազգային սնահաւատութիւնից ստեղծած այն բաստիլիային, որի յետեւում փառաւորապէս բազմել են դաշնակցական բիւրակրատները եւ կարճամտութեամբ եւ առանց խղճահարւելու այտեղից էքսպերիմէնտներ են անում մի ամբողջ ժողովրդի գլխին, իրանց գործելու սիստեմով եւ բնոյթով մի այնքամայն նմանելով Պետերբուրգի բիւրօկրատների վարած ավանտիւրին Մանջուրիայում. այո, բիւրօկրատներին պէտք է տարբերել նրանց ապիկարութեան զոհ գնացած հերոսներից!

Դաշնակցութեան բիւրօկրատիան հայ մոլորած տգէտ ժողովրդի հայրենասիրական սնահաւատութեան մէջ էր գտնում իր ամրութիւնը. Ազգային րոմանտիզմն էր տարածել հայրենափրկութեան այն ցնորքները, որոնց իրագործումը իրենց ձեռքն էին վերցրել մի խումբ տգէտ, տհաս խռովարարներ, իրանց ֆանտաստիկ ծրագիրներին քամիեյի քարարտութեամբ զոհելով հարիւր հազար անմեղ, անզէն արենակիցներ եւ լի հաւատով հերոսներ ։ Էքսպերիմէնտներր չարունակւում էին խենթ յամառութեամբ ։ Եւ ահա այդ խենթութեան դէմ ամէն մի սթափեցնող, զգաստացնող խօսք առաջ էր բերում մեր ազգային-յեղափոխական բիւրօկրատների խմբակի ճիւաղային, նեղսիրտ եւ տխմար կատաղութիւնը ։

——

Անցնենք մեր «հայկական կեանքին» ։

Կատարուեց այն ինչ գուշակում էինք։ Ներկայ պարագաներում կենտրոնական ժողովի պատգամաւորների ընտրութիւնները ցոյց տուին թէ հապճեպով, անորոշ ընտրողական կանոններով, չեղակի սիստէմով եւ առանց ընտրողների ազատ կամքը զինուած բռնի ուժերի ճնշումներից ապահովելու անկարելի է իմանալ ժողովրդի գիտակցող մասսայի կամքը ։ Զարմանալին այն է որ հասարակութեան գիտակից մասը այդ բանին համակարծիք լինելով հանդերձ, չը գիտենք ինչ օպտիմիզմով, այնուամենայնիւ չարունակում է մասնակցել ընտրողական կոմեդիաներին ։ Մամուլի մէջ տպած տեղեկութիւններից յայտնեց թէ մեր երկրի բոլոր անկիւններում ուր հայ կայ ինչ բռնութիւններով կատարուեցան ընտրութիւնները ։ Թիֆլիզում մեր աչքերի առջեւ ականատես եղանք դեմոգօկիական ամեն ձեւերի խաղերին եւ այնուամենայնիւ կարծում ենք թէ էջմիածնում գումարուած «ազգի ներկայացուցիչների„ ժողովը իսկապէս արտայայտիչ է լինելու գիտակից ժողովրդի կամքին Դիմագոգիական այն միջոցները, որ գործ են դնւում պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ, ինչ գրաւական ունէք որ աւելի եւս բռնի ձեւով չեն բանեցնելու կեդրոնական ժողովում, որի մեծամասնութիւնը անկասկած բաղկացած է լինելու նոյն մարդկանցից, որոնք Թրքահայկա-

(*) Ռ. Խ. Այս կտորը քաղված է «Ալիք»ի խմբագրին բնորոշ մի յօդուածից, այդ խմբագիրը մի երես առած տիրացու է . . . .

խօսէր հետեւեալ նիւթի վրա. «Հայ—Թաթարական կըռիւները և Հայոց ապագան»։ Խոշոր տառերով գրւած այս խոշոր վերնագրով բանախօսութիւնը պիտի գար գուշակելու դարերով տանջւող մի ստրուկ ազգի ապագան և հետեւաբար կարելի է երեւակայել թէ Ռուսճուգի երկսեռ հասարակութեան այն մասը, որը իր երակների մէջ քիչ թէ շատ հայ արիւն է կրում, սրտի անհուն անձկութեամբ երեք երկա՜ր օրեր անցկացնելուց յետոյ՝ այսօր առաւօտեանից դիմում էր ուսումնարան լսելու այդ բանախօսութիւնը, որի նիւթը այնքան հետաքրքրել էր իրեն։

Բանախօսութիւնը սկսւեց։ Նախ և առաջ ունկնդիրների խուռն բազմութիւնը ոչ նուազ զարմանքով լսեց թէ պ. Նօհրատեան բանախօսութեան նիւթը փոխելով պիտի խօսի միայն Տաճկահայաստանի և Ռուսահայաստանի ներկայ դրութեան վրայ։ Ի՞նչ արած. խոմ չէր կարելի նիւթի փոփոխութեան պատճառով թողնել հեռանալ սրահից, ուստի ունկնդիր հասարակութիւնը շարունակեց համբերութեամբ լսել մինչեւ վերջը.

Բանախօսութեան ամէն կէտերի վրայ երկարօրէն ծանրանալու մտադիր չեմ, սակայն յուսով եմ որ պ. բանախօսը կը ներէ ինձ ցոյց տալ, մի քանի պակասներ որոնք բանախօսի անկեղծութեան ու ճշմարտախօսութեան վրայ կասկածներ յարուցին ունկընդիրներից շատերի մէջ.

Տաճկաստանի և Կովկասի տըխուր կացութիւնը թէև ամենքին յայտնի՝ բայց պ. բանախօսի գեղեցիկ ոճով ու ազդու բառերով նկարագրելով շատ տպաւորիչ էր. Բայց ափսո՜ս որ շատ կարճ տեւեց այդ տպաւորութիւնը, երբ շատ չանցած պ. բանախօսը ընկաւ այնպիսի միակողմանիութեան մէջ, որը դժբաղդաբար յատուկ է կուսակցամոլ պրօպագանդիստին, հրապարակագրին և բանախօսին.

Ճառի առաջին կարճատեւ մասից յետոյ ունկնդիրները այլեւս ուրիշ բան չլսեցին, բայց միայն դաշնակցական հերոսների արած ու չարած քաջագործութիւնների նկարագրութիւնը, պլըֆներ, չափազանցութիւններ, որոնք վերջի վերջոյ ծիծաղելի աստիճանին հասան։ Մի երկու օրինակ.

Պ. բանախօսի ասելով «Դաշնակցութիւնը եկեղեցական կալւածների գրաւման ժամանակ ըմբռնեց Ռուս միապետութեան քաղաքականութիւնը դէպի հայերը և համոզւեց որ հայ յեղափոխութիւնը պարտաւոր է ուժ տալ ռուս յեղափոխութեան՝ տապալելու համար ցարիզմը, որ հայ ազգի ամենամեծ թշնամին է»։ Ուրախ ենք որ Դաշնակցութիւնը՝ թէև ուշ՝ բայց հասկացել է այդ ակնյայտնի ճշմարտութիւնը, որը 20 տարուց իվեր ցոյց էր տալիս մի ուրիշ հայ յեղ. կուսակցութիւն և որի դէմ հակառակւում էին դաշնակցականները դեռ երեք տարի առաջ։

Պ. բանախօսի տալով «Կովկասի հայ ժողովուրդը միահամուռ մտաւ Դաշնակցութեան դրօշի տակ և այդ կուսակցութեան դուրս բերած խումբերն են միայն, որ կռւել են մղում թաթարների դէմ և պաշտպանում Կովկասի հայութիւնը»։ Թէ դաշնակցականները կռւում են, դա անուրանալի է, բայց միայն ու միայն նրանք են կռւողները, այդ այնպիսի մի բացերեւ սուտ է, որը մենք կը ներէինք Ամերիկայի համբաւաւոր պլըֆճիին, որին Կովկասը ծանօթ չէ, բայց կովկասից նոր եկող կովկասցի պ. Նօհրատեանի՞ն...

Պ. բանախօսի ասելով «Դաշնակցականները Երեւանի մէջ մի գիշեր քառասուն հազար փամփուշտ են արձակել, որոնց հետ միացած ռումբերի որոտընդոստ պայթիւնը Երեւանի մէջ գտնւող ռուս զօրապետներին մտածել տւել են Պօրտ Արթուրի գրաւումը»։ Բանախօսի այս խօսքերը ակամայ մեզ յիշեցրին Սասունի սարերի վրայ Դաշնակցութեան թնդանօթները.

Զգիտենք մինչեւ ե՞րբ մի քանի դաշնակցականներ թողնելով մեծամտութիւնն ու չափազանցութիւնը՝ համեստութեան և ճշմարտախօսութեան օրինաւոր ու տրամաբանական ճանապարհը կընտրեն իրենց կուսակցական պրօպագանդայի մէջ. Ժամանակ չէ՞ արդեօք այլ ևս հասկանալու թէ ժողովուրդի մեծամասնութիւնը ամեն վերից եկած խօսքերը միամտաբար կլլելու տրամադիր չէ.

Դաշնակցական խումբերի գործած հերոսութիւնների երկար նկարագրութիւնից յետոյ—որը ճառի ամենամեծ մասը կկազմէր—պ. բանախօսը անկեղծ լինելու համար խոստովանեց թէ՝ Դաշնակցութիւնը բոլորովին անսխալ ու անարատ չէ և չի կարող լինել, թէ՝ մի քանի տեղերը կեղծումներ ու սրիկայութիւններ գործւել են, և թէ՝ այդ պակասութիւնները ուղղելու և կեղտոտութիւնները մաքրելու համար նա պէտք ունի ժողովուրդի աջակցութեան և այդ պատճառով էլ հրաւիրում է հայ ազգին օգնել Դաշնակցութեան.

Մի խօսքով, դաշնակցական պ. բանախօսը նկատելով որ բացի Դաշնակցութիւնից հայ ազգի վրայ մտածող և նրա ազատութեան համար աշխատող ուրիշ կուսակցութիւն չկայ, հրաւիրում է հայերին մտնել Դաշնակցութեան դրօշի տակ, որովհետեւ այդ դրօշն է որ պիտի ծածանի խրոխտաբար ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ.

Օ՜հ, որքան ապերախտ են հայերը, մանաւանդ միւս կուսակցութիւնները որ չեն ըմբռնում այդ ճշմարտութիւնը.

ՌՈՒՂՆԻՈՐ

Ռուսճուգ, 27 Օգոստ. 1906

կան հարցի եւ ինքնապաշտպանութեան համար ձեռք գցած նիւթական եւ ֆիզիքական ոյժը պէտք է գործադրեն իրանց թայֆայական այնպիսի նպատակների իրագործման համար, որոնք երբէք ի նկատի չեն ունեցել այդ ոյժը նրանց ձեռքում կենտրոնացնողները...

——

Դաշնակցական խուժանապետական ռէժիմը չափազանց ռելիեֆ կերպով պարզւեց վերջին ընտրութիւնների ժամանակ։ «Մշակի» եւ «Կայծի» մէջ բազմաթիւ թղթակցութիւններ են տպւած, որոնք ցոյց են տալիս դաշնակցական բռնապետութեան բոլոր քստմնելի կողմերը(*) Մենք իբրեւ նմուշ բերենք մի հատիկ դոկումենտ, որ ուղարկւած է եւ մեզ։

Լ. Ս.

«Մուրճ»

——

Ծ. Խ.—Այս տեղ բերվում է Կաթողիկոսին ուղարկված մի բողոքագիր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Նարօտնի Պրավա» թերթը կը հաղորդէ որ նախարարութիւնը իր մէկ նիստին մէջ որոշած է յոյներէն խլւած գպրոցները և մէկ քանի եկեղեցիները ետ դարձուին.

—Պուլկար «Բոտոյիւբեցը» ընկերութիւնը որ յոյներու դէմ եղած միթինկներու նախաձեռնարկողն էր, կոչերով կը բողոքէ կառավարութեան դանդաղկոտութեան դէմ ազգային միթինկին որոշումներու գործադրման վերաբերմամբ և կրկին ժողովուրդը կը հրաւիրէ կառավարութեան դէմ բողոքի միթինկներ սարքել.

—«Վեչերնա Բօշթա» թերթի խմբագիրներէն մին Դասկալօֆ, կառավարութեան կառաջարկէ այլեւս Պուլկարիոյ մէջ յոյն եպիսկոպոսներ բոլորովին չընդունել.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Վերջին ուրբաթ օրը Սուլթանը բաց կառքով գացեր է Սելամլքի արարողութեան.

—Ամերիկայի դեսպանը Բ. Դունէն պահանջած է որ Սուլթանէն ունկնդրութեան ընդունուի իր դեսպանական վկայագրերը ներկայացնելու համար.

—Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ կառավարութիւնը դադրած է զինուորներ և պատերազմական մթերքներ ղրկել Պուլկարիոյ սահմանները. Հաստատ համոզում կայ որ Պուլկարիոյ և Թուրքիոյ միջև եղած խնդիրները բարեկամաբար պիտի կարգադրուին.

—Սուլթան պաշտօնապէս բողոքած է վեց պետութիւններուն—որ առանց իրմէ հարցնելու յունական թագուորը Կրետէի կառավարիչ կը նշանակէ.

ՌՈՒՍԻԱ

Ժէներալ Թրէբով կարգուած է պալատական ոստիկանապետ.

—Քանի մը բրօֆէսօրները, որ տումայի երեսփոխան էին հրաժարեցուցուած են իրենց բրօֆէսօրական պաշտօնէն.

—Պալատական շրջանակներու մէջ Ստոլիպինի, նախարարապետին, դէմ դժգոհութիւն կայ, որովհետեւ ան կը հաւատացնէր թէ այլեւս յեղափոխականները ջախջախուած են, մինչդեռ այդ հաւատիացումներէն վերջն էր որ սպանուեցան շատ մը նշանաւոր պաշտօնեաներ և իրեն Ստոլիպինի վրայ սպանութեան փորձ տեղի ունեցաւ.

—Մահափորձերը կը շարունակուին ամբողջ Ռուսիոյ մէջ.

—Կը մտածուի Տումա նշանակուած ժամանակէն աւելի շուտ հրաւիրել. կառավարութիւնը ամեն ճիգ կը թափէ ապագայ երեսփոխանները պահպանողականներէն ընտրուին.

ՍՐԱՀ «ՍԱԼՏԻՆԵՆԻԼ»

1906 Սեպտեմբեր 1, Ուրբաթ գիշեր ժամը 9 ին, վերջին ներկայացումն «ՆԱՏԷԺԴԱ» Հայ դերասանական խմբին ի նպաստ Պ. Վ. Բիւչիւքեանի առաջին անգամ ըլլալով

ԿԱՐԱՊԱՆԸ

բարոյալից թատերգութիւն 4 արար

[illegible]

Յառաջիկայ Սեպտ. 1ին կըսկսի Ամիրխանեանց երկսեռ վարժարանին 2րդ. տարեշրջանը։ Ընդունելութեան եւ այլն պայմանական քննութիւններ կըսկսին Օգոստոս 20ին.

Печатница на П. Глушковъ С. Вар